ԼՐԱՏՈՒ

## Ա. Բ. ԿԱՐԻՆՅԱՆ

Մյ/թ. մայիսի 29-ին կյանքից հեռացավ 1907 թվականից կուսակցության անդամ, երեք հեղափոխությունների մասնակից, կուսակցական ու հասարակական նշանավոր գործիչ, գրաքննադատ և գրականագետ, Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս Արտաշես Բալասու Կարինյանը (Գաբրիելյանը)։

Ա. Բ. Կարինյանը ծնվել է 1886 թվականին, Բաքու քաղաքում, նավթահանքերի վարպետի ընտանիքում։ 1905 թվականին ավարտելով Բաքվի գիմնազիան, ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որն ավարտում է 1910 թվականին։

Տակավին պատանեկան տարիներին նա սկսում է ակտիվորեն մասնակցել հեղափոխական շարժմանը, բոլշևիկյան պրոպագանդա տանելով բանվորների շրջանում։ 1906 թվականին բոլշևիկյան «Կայծ» թերթում լույս է տեսնում նրա առաջին հոդվածը, որը դառնում է նրա՝ բոլշևիկ հրապարակախոսի մեծ ուղու սկիզբը։

Նա եղել է կուսակցության ականավոր գործիչներ Ս. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի և մյուսների մերձավոր զինակիցը, և դա վճռական նշանակություն է ունեցել նրա ամբողջ հետագա գործունեության վրա։

1907 թվականին Ա. Բ. Կարինյանը մասնակցում է ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեի կողմից Ֆինլանդիայի Տերիոկի քաղաքում կազմակերպված խորհրդակցությանը, որտեղ նա առաջին անգամ հանդիպում է կուսակցության առաջնորդ Վ. Ի. Լենինի հետ։

1913 թվականին Ա. Բ. Կարինյանը հեղափոխական գործունեության համար ձերբակալվում է Բաքվում և բանտարկությունից հետո արտաքսվում քաղաքից։

Ա. Բ. Կարինյանի գործունեության նշանակալից էջն է նրա աշխատակցությունը Լենինյան «Պրավդայինն» սկսած 1914 թվականից։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Ա. Կարինյանը ակտիվորեն մասնակցում է Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման համար մղվող պայքարին։ 1918 թվականի ապրիլին նա նշանակվում է Բաքվի կոմունայի արդարադատության կոմիսար, միաժամանակ հանդիսանալով «Իզվեստիա Բակինսկովո սովետա» թերթի խմբագիրը։

Կոմունայի անկումից հետո Ա. Կարինյանը մեկնում է Մոսկվա, որտեղ աշխատակցում է Ազգությունների գործերի ժողկոմատում։ Այնուհետև նա նշանակվում է «Սովետական Կովկաս» ագիտացիոն գնացքի կոմիսար։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո Ա. Կարինյանը շուտով նշանակվում է հանրապետության արդարադատության ժողովրդական կոմիսար։ Այնուհետև գործուղվում է Թուրքիա և ԱՄՆ՝ հայերի հայրենադարձությունը կազմակերպելու համար։ 1924—1928 թվականներին նա Հայաստանի Կենտգործկոմի նախագահն էր։ Այդ տարիներին նա քանիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի կազմում, եղել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկո-

մի, ԱՍՏՍՀ Կենտգործկոմի նախագահության և ՍՍՀՄ Կենտգործկոմի անդամ։ Ա. Կարինյանը ընտրվել է Հայաստանի կոմկուսի մի շարք համագումարների պատգամավոր։

Հետագայում Ա. Բ. Կարինյանը նվիրվել է գիտական ու հրապարակախոսական գործունեության։

Ա. Բ. Կարինյանի գրչին են պատկանում բազմաթիվ հիմնարար գիտական աշխատություններ, որոնք նվիրված են հայ պարբերական մամուլի պատմությանը, հայ և ռուս գրողների ստեղծագործության ուսումնասիրմանը։ Նա մի շարք բովանդակալից հուշագրական ստեղծագործությունների հեղինակ է։

Ա. Բ. Կարինյանի երկարամյա բեղուն գիտական գործունեությունը բարձր է գնահատվել. նա ընտրվել էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։

1960—63 թվականներին Ա. Բ. Կարինյանը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարն էր, իսկ 1963—65 թվականներին՝ ակադեմիայի փոխպրեզիդենտը։

Կուսակցությանը և ժողովրդին մատուցած մեծ ծառայությունների համար Ա. Բ. Կարինյանը արժանացել էր սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման, պարգևատրվել Լենինի, Հոկտեմբերյան հեղափոխության, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով, մեդալներով։

Մեր կուսակցության ավագագույն անդամի, մեծ հայրենասերի, խոշոր գիտնականի, հմայիչ մարդու և ընկերոջ հիշատակը ընդմիշտ կմնա մեր սրտերում։

Կ. Ս. Դեմիրճյան, Բ. Ե. Սարկիսով, Ֆ. Տ. Սարգսյան, Գ. Ն. Անդրեև, Կ. Լ. Դալլաքյան, Վ. Բ. Ղալումյան, Կ. Հ. Ղամբարյան, Լ. Ն. Ներսիսյան, Լ. Ս. Շուստկո, Ս. Մ. Պետրոսյան, Հ. Մ. Ոսկանյան, Մ. Բ. Արզումանյան, Դ. Ա. Հարությունյան, Գ. Ա. Մարտիրոսյան, Մ. Հ. Մուրադյան, Լ. Գ. Սահակյան, Մ. Ա. Ցուզբաշյան, Վ. Ա. Տուրյան, Հ. Մ. Բաղդասարյան, Ա. Մ. Կիրակոսյան, Ս. Լ. Թումանյան, Հ. Ա. Հայրապետյան, Վ. Մ. Մովսիսյան, Ֆ. Գ. Պետրոսյան, Հ. Ս. Սաղոյան, Ռ. Ք. Սվետլով, Վ. Հ. Համբարձումյան, Ն. Պ. Սահակյան, Ա. Դ. Իսսիֆյան, Ա. Ռ. Հովհաննիսյան, Վ. Վ. Ֆանարջյան, Գ. Ա. Գալոյան, Հ. Ռ. Սիմոնյան, Լ. Մ. Կրոյան, Վ. Հ. Պետրոսյան, Հ. Ե. Վարդանյան, Է. Ս. Գաբրիելյան, Ս. Ա. Համբարձումյան, Դ. Գ. Ստուրուա, Տ. Կ. Քոչարի, Բ. Ա. Սարգսյան, Հ. Տ. Ադոնց, Գ. Մ. Ղարիբյան, Ա. Բ. Նալբանդյան, Վ. Հ. Ղազարյան, Ա. Գ. Նազարով, Գ. Ա. Բրուտյան, Մ. Մ. Ջրբաշյան, Հ. Ա. Ավետիսյան, Բ. Ն. Առաքելյան։